Գլուխ 9. ՆԵՐՔԻՆ ՍՏՈՒԳՈՒՄ

Սկզբունքը

Պատշաճ արտադրական գործունեության սկզբունքների կիրարկումը եւ համապատասխանությունը մոնիտորինգի ենթարկելու եւ անհրաժեշտ ուղղիչ միջոցներ առաջարկելու նպատակով պետք է իրականացվեն ներքին ստուգումներ:

9.1 Անձնակազմին վերաբերող խնդիրները, տարածքները, սարքավորումները, փաստաթղթերը, արտադրությունը, որակի հսկումը, դեղերի բաշխումը, բողոքների եւ հետկանչի հետ կապված գործողություններն ու ներքին ստուգումները պետք է նախապես պլանավորված ծրագրի իրականացումից հետո պարբերաբար ուսումնասիրվեն՝ հաստատելու համար դրանց համապատասխանությունը որակի ապահովման սկզբունքներին:

9.2 Ներքին ստուգումները պետք է իրականացվեն անկախ եւ մանրակրկիտ կերպով՝ ընկերության կողմից նշանակված իրավասու անձի (անձանց) կողմից: Արտաքին փորձագետների կողմից իրականացվող անկախ աուդիտները եւս կարող են օգտակար լինել:

9.3 Բոլոր ներքին ստուգումները պետք է արձանագրվեն: Հաշվետվություններում պետք է ընդգրկվեն ստուգումների ընթացքում կատարված բոլոր դիտարկումները, իսկ հարկ եղած դեպքում՝ ուղղիչ միջոցներ կիրառելու վերաբերյալ առաջարկությունները: Պարբերաբար ձեռնարկվող գործողությունների վերաբերյալ եզրակացությունները նույնպես պետք է արձանագրվեն: